Մի վերջին արձանագրութիւն էլ նրանք Անիում ունին, բայց առանց թուականի և պակասաւոր, երևան եկած ակադեմիկ Մառի պեղումներով. արձանագրութիւնից պարզւում է, որ Ուքան և Պապքան եղբայրները չինել են «զանկակատունս» եւ նուէրներ տուել, ստանալով պատարագներ «մեր հաւրն Սարգսի և Սթէ Սարգսի արքաս(ունին եւ Մերչէ և. [պակաս պատարագի թիւը] աւր) մեզ Ուքանիս և Պապքանիս և Դապտայ խաթունիս...»(*)։

Վերջին արձանագրութիւնները կըռուան կարող են լինել եզրակացնելու, որ Ուքան և Պապքան եղբայրները իբրև վաճառականներ հաստատուում են Անիում և Ումեկեանների ու նրանց ազգականների նման տոհմական եկեղեցի ձեռք բերում։

* * *

Համեմատութեան նիւթ կարող է կազմել դրամի մօտաւոր արժէքը հասկանալու համար նաև հետևեալ արձանագրութիւնը, որի բնագիրը վերականգնել և բացատրել է պրոֆ. Մառը(**).

1. Թվ. ԶԺ ի տիեզերակալութի Հուլաւու ղանի եւ Սահմադին որդի [Աւետաց գ] նեցի զբազաւորանիս[ս] տեղի[ս] զՄրեն ի յԱրտաշրէ որդո Շահնշահի հաղալ ընչ[ից իմ]ոց ի վայելումն ինձ եւ որդ

2. ոց իմոց. ած շնորհաւոր ար[ա]ացի յաւիտեանս ժամանակաց։ | ի թվ | ՉԻԵ յաշխարհակալութէ Ապաղա ղանին եւ Սամսին, որ պարոնին ամարանոց ու դարպաս չկայր, զաս այգիս եւ զրա

3. խաս, որ կոչի Արքայութի, գնեցի զամեն մեկ յիր տիրոչեն. եւ յիմ մտաց դուս՝ առանց(?) վարդպետի ձեռեցի ու հիմն ձգեցի դարապասիս ու դրախ[ս]իս. ի [Ժ] տարին կատարեցի. ած

4. շնահաւոր արաւցի պարոն Սահմատնին որդից ի յորդիք. ու խարն, որ եղաւ դարապասիս։ խ։ ռ։ դուկաս դահեկան։

Ընթերցողը տեսնում է, որ արձանագրութիւնը երկու մասից է բաղկացած. առաջինը Մրենի գնման է վերաբերում, իսկ երկրորդը Սահմադին «պարոն»ի համար «դարապաս» այգի գնելուն. քառասուն հազար դուկատ դահեկանը ծախսուել է ապարանքի շինութեան, այգի ու դրախտ գնելու և կարգաւորելու համար։ Հրատարակիչը «դուկատ դահեկանը» համազօր է կարծում կարմիր կամ ոսկի դահեկանին։

(*) X. B. 1917. 151։

(**) N. Marr. Nowie materiali po armianskoi Epigraphike. 1893. ռուսերէն (Նովիէ մատերիալի պո արմեանսկոյ էպիգրաֆիկէ)։